

**Հայերն աստվածատուր առաքելություն ունեցող ժողովուրդ են**

**Մարգարյան Սուրեն Թ.**

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)*  
sargsyansuren@yandex.ru

**EDN: WUTNJC**

***Գինգավերն ու մամոնտները վերացան, իսկ անողնաշարավորները՝ ոչ: Փաստորեն վերջիններն ավելի կենսունակ են:***

Բոլոր հայերը տառապում են հայրենաբաղձությանը և դա մայրական կաթի հետ փոխանցվում է սերնդեսերունդ: Ուստի պատահական չի, որ օտարության մեջ հայտնված Հայաստանի ցանկացած տարածք և բնակատեղ, յուրաքանչյուր հայի սրտում սպիացած վերք է: Դրանցից մեկը Կարս քաղաքն է, որի անկման մասին /տեղի ունեցավ 1920 թ. հոկտեմբերի 30-ին/ վերջերս շատ է խոսվում: Իրար հերթ չտալով մեր ամենագետները դրա համար հիմնականում մեղադրում են Ռուսաստանին: Մակայն իրականում Կարսի հանձնումը չպետք է կապել ռուսական կողմնորոշման կամ ազդեցության հետ:

Մեր օրերում Կարսի անկման ժամանակաշրջանի իրադարձությունները գրեթե նույնությամբ կրկնվում են: Դա է պատճառը, որ առանց մանրամասների մեջ խորամուխ լինելու, կփորձենք հակիրճ պարզաբանել այդ թնջուկի ողնաշարը կազմող հիմնադրույթը: Հարյուր տարի առաջ Մեծ տերությունները /Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, նաև ԱՄՆ/ բացահայտ կամ գաղտնի ձևերով, աշխատել են ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության փլուզման հետևանքով առաջացած նոր կազմավորվող երկրներում, այդ թվում նաև Ռուսաստանում և Թուրքիայիում /որտեղ չի հաջողվել/ պարտադիր ներդնել այդ շրջանում Արևմտյան բարձրագույն արժեք համարվող ինտերնացիոնալիզմի գաղափարը: Պատկերը մեր օրերում էլ գրեթե նույնությամբ կրկնվում է: Եվրոմիության առաջատար երկրների և ԱՄՆ-ի կողմից ԽՍՀՄ-ը փլուզելուց հետո, ինչպես Մոցիալիստական ճամբարի երկրներից այնպես էլ ԽՍՀՄ-ից առանձնացած նոր ազգային պետական կազմամիավորումներում այժմ էլ ստիպողաբար ներդրվում են Արևմտյան կամ Եվրոպական «ժողովրդավարություն» կոչված արժեհամակարգը: Այդ նպատակով թելադրող կայսրությունների ցանկությամբ արդեն ստեղծվել են Կոսովո, Սերբիա, Չերնոգորիա, Հյուսիսային Մակեդոնիա և այլ խամաճիկ պետություններ: Իսկ Արցախը, Աբխազիան, Հարավային Օսեթիան, Մերձդնեստրյան, Դոնեցկի, Լուգանսկի հանրապետությունները որպես նորանկախ պետություններ, ինչպես նաև Դրիմը Ռուսաստանին միանալը՝ անընդունելի են միաբևեր աշխարհակարգի ձգտող ԱՄՆ-ի և Եվրոմիության առաջատար երկրների կողմից: Այսինքն՝ ինչպես հարյուր տար առաջ, այնպես էլ մեր օրերում, իրենց Երկրագնդի «տերեր» համարող Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Գերմանիան ԱՄՆ-ի գլխավորությամբ իրագործում են աշխարհի նոր վերաբաժանում: Սա է իրականությունը, որը Կարսի ժամանակաշրջանի կրկնությունն է: Այնպես որ Կարսի անկումը ոչ թե Ռուսաստանի՝ այլ Արևմտյան արժեքներ կրող և հրամցնող երկրների «բարի կամքի» քաղաքականության հետևանք է եղել: Իսկ մենք մի քանի այլ թույլ ժողովուրդների հետ միասին ընդամենը մեծ ազգերին պարարտացնելու համար սնուցող պարարտանյութ ենք եղել և՛ ենք: Մի բան, որ լիուլի ապացուցեց վերջին 30 տարիների մեր պահվածքը և որն ամփոփ կարելի է հեևյալ կերպ ձևակերպել՝ մենք պատրաստ չենք, չենք կարողանում կամ չենք ուզում անկախ պետություն ունենալ: Այլ ընհակառակը՝ ուրիշ ազգերի տաք ու սննդարար թևատակ կամ հաստադիր ենք ման գալիս, որ խծկվենք: Եվ արդեն մի քանի դար փորձում ենք որոշել՝ արևմուտքի հաստադիրքն ու թևատակն են ավելի լավը, թե Ռուսական կայսրության:

Գուցե դա այնքան էլ մեղադրելի չէ, քանզի ութ-ինն դար սրա-նրա թևատակում ենք գոյատևել, որը կենսակերպ ու բնավորություն է դարձել: Ի դոպ, դրանցից ամենաապահովը թերևս ԽՍՀՄ-ն էր, երբ լավ-վատ, սակայն թե քանակական, թե որակական թռիչքաձև զարգանում էինք: Իսկ երբ անկախացանք և երեսուն տարի սեփական թևատակում ապրեցինք, ինչ հնարավոր էր թալանեցինք ու տարանք, որ կրկին ամերիկայի, եվրոպաների կամ ռուսական թևատակում ապրենք՝ մոռանալով, որ արևմտյան թևատակում օրենքով ապրել կպահանջեն, իսկ մենք օրենք հարգել չգիտենք:

Այդ ընթացքում էլ անկախ նրանից, թե ինչպես ենք մեզ դրսևորում, անընդհատ մեր գլխին բամփում են: Դա պարզ երևում է նաև Մոչիում ընդունված համատեղ հայտարարության տեքստից. որից ակներև է, որ մեր գլխին կրկին դիվանագիտորեն և քաղաքականապես բամփել են: Իսկ մեր միակ հերթական «նվաճումն» այն է, որ հայտարարությունից դուրս են թողել «Լեռնային Ղարաբաղ» անվանումը: ՌԴ խաղաղարար առաքելության տեղակայման վայրն էլ նշել են անորոշ՝ անհասցե բացազատման գոտում: Եթե նույնիսկ խաղաղարար առաքելության տեղակայման վայրի Լեռնային Ղարաբաղ անվանումը չի ներառվել տեքստում, էլ ի՞նչ եք ուզում այդ անընդհատ ստորացվող

բանակցություններից: Ոչ մի բառ ՀՀ սուվերեն տարածքների դեօկուպացիայի կամ գերիների վերադարձի մասին էլ չկա: Ինքնորոշման իրավունքի մասին չեմ ասում: Ոչ մի խոսք կոմունիկացիաների նկատմամբ սուվերեն վերահսկողության մասին և այլն: Արդեն կարելի է ենթադրել, թե այս խեղճ ու կրակ, տանջված ժողովրդի վաղվա օրվա համար փաստորեն ոչ մի քաղաքական, դիվանագիտական, անվտանգային հենարան չթողած իշխող քաղաքական թիմը ինչպիսի «խաղաղության պայմանագիր» է պատրաստվում կնքել: Ակնհայտ է, որ նա մինչև վերջին հնարավորությունը ամեն բան մտնել է և պատրաստ է նույնիսկ չխնայել բազմաչարչար ժողովրդի արյան վերջին կաթիլը: Պարզ է նաև, որ սա ակնհայտորեն ևս կես քայլ է դեպի հաջորդ կապիտուլյացիա:

Ամենայարգ դիտարկումներն անգամ կրկին հաստատում են, որ նոր աշխարհակարգ ձևավորելուն միտված գլոբալ հակամարտության ուկրաինական թատերաբեմում է որոշվելու նաև հայ-ադրբեջանական կարգավորման տրամաբանությունն ու Արցախի նակատագիրը: Իսկ դրա համար կարծում ենք, որ Ռուսաստանը ցանկանում է՝ ա/ Հարաբերությունների կարգավորումը մեկնարկել սահմանագծման և սահմանագատման գորընթացին, հաղորդակցության կապուղիների ապաշրջափակումից, որտեղ կունենա վերահսկողության սեփական մեխանիզմները: Բ/ Արցախի հիմնախնդիրը ոչ այնքան առանձնացնել հայ-ադրբեջանական կարգավորման գորընթացից, որքան դարձնել ոչ փաթեթային կարգավորման առարկա: Գ/ Բացառել կամ գոնե նվազեցնել հակամարտության գոտում ուժի գործադրման հավանականությունը՝ հատկապես ներկա աշխարհաքաղաքական լարվածության համապատկերում: Դ/ Հնարավորինս նվազեցնել տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի հետագա ամրապնդման հավանականությունը:

Կարծում ենք, որ Ադրբեջանն էլ հետևյալ ցանկություններն ունի՝ ա/ Հնարավորինս արագ, քանի դեռ Ռուսաստանը զբաղված է Ուկրաինայում, փաթեթային տարբերակով իրագործել այսպես կոչված խաղաղության օրակարգը: Բ/ Կապուղիների ապաշրջափակում իրականացնել այնպես, որպեսզի հնարավորություն ունենա Նախիջևանը «փրկել» առաջին հերթին Իրանից, ապա նաև՝ Թուրքիայից: Գ/ Արցախի խնդիրը՝ որպես ներքաղաքական կյանքի վրա ազդեցության գործիք, վերջնականապես հանել թե՛ հայադրբեջանական, թե՛ ռուս-ադրբեջանական օրակարգից:

Միանգամայն ենթադրելի է, որ Հայաստանի ցանկություններն էլ հանգում են հետևյալին՝ Վաղայում Պուտինը բացեց խաղաղքարտերը, հիշեցրեց Արցախյան հարցի կարգավորման նաև Վաշինգտոնյան տարբերակի գոյության մասին ու նաև ակնարկեց, որ դա հայ ժողովրդի և նրա իշխանությունների որոշելիքն է: Այնուհետև ընդգծեց, որ չնայած մինչ այդ Հայաստանում ռուսական ամեն ինչից դժգոհություններ կան, սակայն հայ ժողովուրդը հանկարծ հրապարակային հավանություն տվեց կարգավորման ռուսական սկզբունքներին: Թերևս խնդիրն այն է, որ մեր վարչախումբը քաջ գիտի, որ այդ սկզբունքներին հակադրվելու է առաջին հերթին Ադրբեջանը (ինչը և եղավ), իսկ Ռուսաստանը գոնե այս պահին Ադրբեջանի հանդեպ կոշտ դիրքորոշում հանդես բերելու անհրաժեշտություն չունի: Պուտինի այսօրվա հայտարարությունը, թե Ղարաբաղի հետ կապված ոչ բոլոր հարցերում ենք կարողացել համաձայնություն ձեռք բերել, հենց սրա մասին է, բայց նաև արձանագրումն այն բանի, որ Արցախի հարցում դեռ լրացուցիչ համաձայնության անհրաժեշտություն կա: Դա է հաստատում նաև օրերս Հայաստանում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինի հայտարարությունը, որ «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցն այն խնդիրն է, որը պետք է թողնել հաջորդ սերունդներին, երբ ստեղծվեն այս հարցի լուծմանն ուղղված բոլորի համար ընդունելի արդար լուծման պայմանները»:

Ամեն դեպքում մեր իշխանությունների համար ամենակարևորը հերթական արդարացումը ձեռք բերելն է՝ թե իբր կարգավորման հարցում Ռուսաստանն անգործունակ է և չի շարունակում Ալիևի հետ միասին կյանքի կոչել Բյուսելա-վաշինգտոնյան փաստաթուղթը: Ամեն դեպքում սեպտեմբերից ի վեր այս առումով Արևմուտքի հետ բազմաշերտ աշխատանք է տարվել, որը հենց այնպես «փոշիացնել» չէին կարող: Հենց դա պատճառը, որ վարչապետը միանգամից ուշագրավ այցելեց Թեհրան, քանի որ վերջինս Ռուսաստանի հետ միասին ունեն տարաաշրջանում ընդհանուր մարտահրավերներ և համաձայնեցված շահեր:

Այժմ չհասկանալ, թե ի՞նչ ու ինչո՞ւ կատարվեց մեզ հետ, ու ի՞նչ անել, որ դուրս գանք այս իրավիճակից, նշանակում է չհասկանալ ոչ մի բան: Ցավն այն է, որ մենք բուժման առաջին գրավական ճիշտ ախտորոշելու ընդունակություն չունենք, որը բուժման հավանականությունը խիստ նվազեցնում է: Այլ նախկին ժամանակների նման շարունակում ենք մեղադրել բոլորին, բոլորով պայմանավորել պատճառը և ուրիշների աչքի մեջ անընդհատ փուշ ման գալ, իսկ սեփական աչքի գերանը չտեսնել: Մի բան, որն ի դերս է հանել մեր 30 տարվա խնդիրները, որոնք մենք ոչ միայն չկարողացանք լուծել, այլև ցույց տվեցինք, որ բացի ընտանիքից ուրիշ բան չենք կարողանում պահել: Որ պետություն, հասարակություն և նման իրողությունները մեզ համար գոյություն չունեցող հասկացություններ են և դրանք հնչում են լոկ կենացի մակարդակում, բայց խորքային՝ որպես արժեք,

կարևորագույն գործոն, իրականում մեր մեջ չկան: Իսկ դրա պատճառն իմ կարծիքով նախ և առաջ այն է, որ մենք փուլզեցիմք մեր կրթական համակարգը, պարզունակ դարձրինք այն և դա ունեցավ իր տխուր հետևանքները: Իսկ ամենացավալին այն է, որ այդ ամենը սոսկ անձի, այլ մեր ազգային բնութագրի խնդիր է: Որովհետև երեսուն տարի շարունակ մարդկանց գիտակցաբար ու կանխամտածված չսովորեցրին և չթողեցին ապրել, այլ միայն ընդամենը՝ գոյատևել: Իսկ ընդամենը գոյատևող մարդը դեգրադացվեց այն աստիճան, որ իր ձայնը 5 հազար դրամով սկսեց վաճառել և բոլորովին չամաչել դրա համար:

Կրթության նշանդոն այսօր մեզանում այնքան է իջել, որ այդ կործանարար համակարգը փոխելու և խնդիրները լուծելու փոխարեն ինչոր փրկիչ-անձերի հետ ենք հույսեր կապում, որ գա մեզ փրկի: Պատահական չի, որ որոշ օտարազգի մտածողներ /չեմ ցանկանում հղել/ մեզ համեմատել են գոմաղբի հետ, որը պետք է վերցնես ու տարբեր հողեր պարարտացնես հայերով և չթողնես, որ նրանք մի տեղում հավաքվեն ու փտեն: Բհարկե, սրա մեջ ճշմարտություն կա՝ հայերը տաղանդավոր են և երբ նրանց դնում են պատրաստի ենթակառուցվածքի վրա, անպայման կայանում են, կատարելագործվում: Սակայն ցավն այն է, որ իրենք ընդունակ չեն ենթակառուցվածք ստեղծելու, որովհետև իրենց մեջ մի նարատիվ է՝ ամեն գնով ընտանիք պահել: Այսինքն՝ հայի հայրենիքն սկսվում է իր տան դռնից: Գիտակցություն, որն անպայման պետք է փոխել:

Երբ ԽՍՀՄ-ը փլուզվեց և երկնքից անկախությունն ընկավ մեր գլխին, մենք չիմացանք՝ ինչ անել և սկսեցինք թալանել ու վաճառել ամեն ինչ, որ տուն պահենք, որ աղամանդ ու հազար հատ բնակարան ունենանք: Իսկ այսօրն այդ ամենի արձագանքն է, քանզի մենք չհասկացանք ի՞նչ է պետությունը և ինչպես է պետք վարվել դրա հետ: Մանկապարտեզից սկսած ձևամոլությունն ամենուր դարձավ տիրապետող: Նույնիսկ որոշ կիսագրագետներ գիտական թեզեր «պաշտպանեցին», բանակում չճառայածներ գեներալ ու նախարարներ դարձան, իսկ իրական նվիրյալներն ամենուրեք արժեզրկվեցին ու արհամարվեցին: Հենց սա էլ այն գերանն է մեր այքում, որը մենք չենք տեսնում: Ամենուրեք ազդարարեցինք, թե հայրենասեր ենք, որ պետական գործիչ ենք, որ քրիստոնյա ենք՝ այդպես էլ քրիստոնյա չդարձած: Այսինքն՝ մեր ամբողջ արժեհամակարգը կեղծ է եղել, ու դա բերել է 5 հազար երեխայի կորստի և շուրջ 15 հազարի խեղման: Իսկ դա ողբերգություն է, որի արձագանքը դեռ երկար ենք զգալու, քանի որ մեր գենոֆոնդն ենք կոտորել, ա՛յ թե ինչ ենք վճարել այդ սոցիալության համար:

Ցավոք, պետք է խոստովանենք, որ պետական մտածողություն չկա, թալանելով տուն պահելը խրախուսվում է և որև մեկի կողմից չի դատապարտվում: Հենց սա պետք է փոխել, կրթական համակարգը հիմնանորոգել ամբողջովին, մերժել եսակենտրոն հոգեկերտվածքը, որ ամենամոտ ժամանակում հնարավոր դառան կերտել այնպիսի հասարակություն, որը կհասկանա՝ փող աշխատելը ազգային գաղափարախոսություն չի կարող լինել: Ստիպված եմ արձանագրել, որ հազար տարի առանց պետություն գոյատևել ենք, բայց երբ ունենում ենք այդ պետությունը, ուղղակի չգիտենք ինչպես վարվել դրա հետ: Այժմ էլ փաստորեն այդ տրագիֆարս /ողբերգության և կոմիկականի միախառնված ժանր/ իրավիճակում ենք: Հետո ի՞նչ է լինելու, իսկապես դժվարանում եմ ասել: Միայն աղոթում եմ, որ ժողովուրդս վերջապես խելքի գա, գնահատի իր արմատները սնող աստվածատուր հողի ավանդույթները, իրապես որդեգրի աստվահանո կեցվածք և խելամիտ ու հաշվենկատ վերաբերվի այն ամենի հետ, ինչ վերուստ տրված է իրեն որպես մեծ առաքելության կրողի:

1-14/11/2022